# (ՌՃԳ = 1654)

Յունուար ամիս օր Կիրակի եւ Նոր Տարի:

Եշի (5 Յունուար). մօտ լուսի առաւօտեան երոցք եղեւ ի մեր փռան վերի գլ՟ն, շուտ մարեցին զնա:

Ուրբաթ (6 Յունուար). Ծնունդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Կիրակի (8 Յունուար). ընդ Տէրտէրին ի Ղալաթա գնացաք ի վարդապետի քո՟մ:

ԺԵ-ին Կիրակի. Բարեկենդան Առաջաւորի:

ԻԲ-ին Կիրակի. քիւրէկն ելաւ:

Գշի (24 Յունուար). զմեր փուռն օրհնեցաք: Օրերքս զբանտի եղեալ աղջիկն բազում զանիւք ուրացուցին: Եւ Պաղտատու փաշան եկաւ՝ Մուստաֆան:

Փետրուար ամիս օր Դշի:

Եշի (2 Փետր.). մեք և Մղտեսի Տիլակն ի Մղտեսոնցն գնացաք բարեկենդան առնել:

Ե-ին Կիրակի. Բարեկենդան մեծ:

Միւսում Գշի ԺԴ-ին՝ Տեառնընդառաջ:

Եւ միւսում օրս (15 Փետր.) մեր Տէր Գրիգոր աւագերէցն վաղջանեցաւ. գնացաք ի գերեզմաներն:

Ուրբաթ (17 Փետր.). Առաջնորդն եկեալ ի Սուրբ Նիկողոս դատաստան առնել վասն Քիւրէկին:

Շաբաթիս (18 Փետր.) Տէրտէրն գնաց ըստակ առնել ի յէֆէնտուն:

ԺԹ-ին օր Կիրակի. Ոհան պարոնտէրն եկաւ յէտրէնու, անդ գնացի:

Ուրբաթիս (24 Փետր.) գնացին[1]) մէկ քանի երէց ի փաշային դուռն վասն եկեղեցոյն, որ անդ ի մէջ

1) գնացի.